# ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայքի Լորուտ և Աթան բնակավայրերի հանդիսությունների սրահների սանհանգույցների կառուցման աշխատանքների շինարարության կազմակերպման նախագիծը մշակվել է համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 (Շինարարության արտադրության կազմակերպում) և ՇՆ 440-79 (Շինարարության տևողության նորմեր) ձեռնարկներին համապատասխան:

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Աշխատանքների ժամանակ խիստ պահպանել ՀՀՇՆ13-02-22 (Անվտանգության տեխնիկան շինարարությունում) ձեռնարկի պահանջով:

Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին ծանոթացնել անվտանգության տեխնիկայի կանոնների հետ՝ ըստ մասնագիտությունների:

Շահագործվող մեքենաները պետք է անցած լինի տեխնիկայի անվտանգության փորձաքննություն և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:

Հակահրդեհային անվտանգությունը շին-հրապարակում և աշխատատեղերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ»-ին՝ եռակցման և այլ աշխատանքների իրականացման համար:

Մեխանիզմներից և սարքավորումներից օգտվելիս հետևել նրանց օգտագործման հրահանգներին:

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

- Շին աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կազմել աշխատանքների կատարման նախագիծ (ԱԿՆ):
- Շին աշխատանքները կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները, ըստ III-IV-2008-ի դրույթներով, մասնավորապես բացառիկ դեպքերի համար ԱԿՆ-ում մշակել միջոցառումներ: Բեռի տեղափոխում շինության վրայով կատարել շինարարության գլխավոր ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովելով անվտանգության տեղնիկայի պատասխանատու անձի մշտական ներկայությունը, որը վերահսկում է հուսալիությունը, ազդարարի ճիշտ համագործակցումը կռունկավարի հետ:
- Շին աշխատանքները կատարել պահպանելով շին նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեղնիկական պայմանը:
- Շին հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության կանոններով: Շին հրապարակը հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է շինարարության ղեկավարը, կամ նրան փողարինող անձը:
- Շին աշխատանքները սկսել համապատասխան շին թույլտվություն ստանալուց հետո:
- Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ:
- Շինարարության համար նախատեսված է մեքենա ամբարձիչ:

Ազդանշանային ցանկապատ
ըստ ԳՈՍՏ 12.4.059 - 89



## ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Չի թույլատրվում | Ուշադրություն վտանգավոր է | Մուտքն արգելվում է | Վտանգավոր է. հնարավոր է բեռի անկում



## ՇԻՆԱՐԱՐԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն հինգ տարվա երաշխիքային ժամկետ:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

Քաղաքացիական բնագավառում շինարարության իրականացում ըստ հետևյալ ոլորտների
1. Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (03.04) 2-րդ կամ 3-րդ դաս:
2. Էլեկտրամատակարարում (Էլեկտրամատակարարման, Էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, Էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) (03.04) 2-րդ դաս կամ 3-րդ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Աշղեկ՝ ինժեներ-շինարար «ԱՔՇ», առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձով:
2. Աշղեկ՝ ինժեներ-Էլեկտրիկ, առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձով:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Ինքնաթափ ավտոմեքենա - 1 հատ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Թումանյան համայնքապետարան ՊԱՏՎԵՐ՝ N ԼՄ-ԹՀ-ՄԱԽԾՁԲ-26/22* | | ՀԱՏՈՐ՝ 1 |
| | | | | | | ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայքի Լորուտ և Աթան բնակավայրերի հանդիսությունների սրահների սանհանգույցների կառուցում | | |
| ՓՈՓ. | ՄԱՍ. ՔԱՆ. | ԹԵՐԹ | ՓԱՍՏԱԹ.N | ՍՏՈՐԱԳՐ. | ԱՄՍԱԹԻՎ | | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| Տնօրեն՝ | Ս.Ղազարյան | | | | | ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՆ | ՇԿՆ-1 | |
| ՆԳՃ | Ս.Ղազարյան | | | | | ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | ARCHICRAFTBIM | | |
| Նախագծ. | Խ.Գրիգորյան | | | | | | | | |